



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում
Մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, հուլիսի 2, 2012թ.

Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպոյը հուլիսի 3-4 կայցելի Հայաստան

Եվրոպական խորհրդի նախագահ Ն.Գ. Հերման վան Ռոմպոյը հուլիսի 3-5-ը պաշտոնական այցով կլինի Հարավկովկասյան տարածաշրջանում: Այցը կմեկնարկի Հայաստանում հուլիսի 3-4 և կշարունակվի Վրաստանում և Ադրբեջանում:

Պրն. Ռոմպոյը հանդիպումներ կունենա Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի և Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ և ողջույնի խոսք կուղղի Ազգային ժողովի պատգամավորներին: Նախագահ Ռոմպոյը նաև բացման խոսքով հանդես կգա "Հայաստանը Եվրոպայում" քաղաքացիական հասարակության ֆորումի առջև, ինչպես նաև կայցելի Ազգային պատկերասրահում ներկայումս ընթացող "Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք" և "Հայկական տպագիր գրքի 500-ամյակ" ՅՈՒՆԵՍԿՈ ցուցահանդեսներին: Այնուհետև նա կարճատև այց կկատարի Զվարթնոցի տաճար:

Հանդիպումների ընթացքում Ն.Գ. վան Ռոմպոյը զրուցակիցների հետ կքննարկի Հայաստան-ԵՄ հարաբերություններին, ներքին քաղաքական իրավիճակին, տարածաշրջանին վերաբերող, ինչպես նաև երկուստեք հետաքրքրության այլ հարցեր:

Նախագահներ վան Ռոմպոյը և Սարգսյանը համատեղ մամուլի ասուլիս կանցկացնեն: